



**ՊԱՏՐԻԱՐՔ
ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ**



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Միջազգային կրօնական այս ուստանին՝ Երուսաղէմին մէջ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին ունի իր արժանավայել տեղն ու դիրքը, իբրև նուիրապետական կայք և ազգային ժառանգութիւն: Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը իսկական մեծութիւն մըն է միջազգային առուսով. ան մէկն է քրիստոնէական եկեղեցոյ ամենապատշաճ անցեալ ունեցող հաստատութիւններէն: Այս սրբազան ժառանգութիւնը միշտ բարձր պահելը ազգին նուիրական պարտքը եղած է ու պարտի մնալ իբրև քաղցր լուծ մէն մի հայու վզին: Անցեալին, ու տակաւին ցայսօր, անհատներ և հաստատութիւններ փորձած են ու կը փորձեն նսեմացնել անոր փառքը: Դարերու փորձորիկներն անգամ չեն կրցած խախտել անոր պատուանդանը, որովհետև ան սուրբ է և կը նայի յաւերժութեան:

Հայոց Պատրիարքարանը իր ունեցած դարաւոր իրաւունքներով և կրօնական-ազգային արժէքներով, կը գրաւէ այնպիսի իւրայատուկ տեղ մը, որուն կրօնական տարածքը հոգիներուն վրայ վեր կը մնայ ամէն չափերէ ու բաղդատութիւններէ: Հայ Երուսաղէմի սրբատեղիները, որոնց իրենց նպաստը դարերու մէջէն բերած են հայ արքաներ, ազնուականներ և պարզ ուխտատուներ, բիրեղացումն ու մարմնացումը եղած են մեր ժողովուրդին հուժկու զգայնութեան և անդիմադրելի սլացքին: Իսկապէս հրաշքի համագոր է այն իրողութիւնը, որ ամէն օր իր ճակատագրին դէմ մաքարող մեր ժողովուրդը կրցած է ունենալ և պահել իր դերն ու դիրքը աշխարհի մեծ եկեղեցիներուն հետ, ու այդ անկասկած կը պարտինք մեր երանելի նախնիքներուն, որոնք իրենց համեստ ոյժերով, սակայն շնորհիւ իրենց աննկուն կամքին և զոհողութեան զերագոյն ոգիին, մեզ օժտած են անկապտելի ժառանգութեամբ, որ մեր միա՛կ և իրաւ հարստութիւնն է:

Այս տողերուն մէջ կ'ուզենք տալ համառօտ պատմութիւնը Սրբոց Յակոբեանց պաշտօնաթերթ «Սիոն» ամսագրին, որուն առաջին թիւը լոյս

տեսած է 1866 թուին, Եսայի Պատրիարքի օրով, - խմբագրութեամբ Տ. Թ. Սաալանեանի և շարունակուած է մինչև 1877:

Հաւանաբար այդ օրերուն, Պատրիարք Սրբազան Հօր - որ թէև մտատրական բացառիկ պատրաստութիւն չէր ունեցած - սակայն անպայման իրեն գլխաւոր մտահոգութիւն ըրած էր ետ չմնալ այդ օրերուն Պոլսոյ մէջ խմորուող հայ ազգային մտատրական նոր կեանքի շարժումէն, հայ մամուլին մէջ իր ըսելիքը ունենալու համար:

Եսայի Պատրիարք եթէ իսկ չունէր մտատրական պատրաստութիւն մը, սակայն եղած է բացառիկ ուշիմ անձնատրութիւն մը, որ նախազգալով Ս. Աթոռի անմիջական կարիքները, ո՛չ միայն զարկ կու տայ ժառանգատրաց Վարժարանի կրթական մակարդակին, այլ նաեւ կը խրախուսէ տպագրական գործը, հրատարակել տալով հին և նոր գործեր, տպարանը կ'օժտէ այդ ժամանակներու արդիական գործիքներով և կը ձեռնարկէ «ՄԻՕՆ»ի հրատարակութեան: Իսկ թէ ո՞րքանով «Սիոն» այդ օրերուն ծառայեց իր նպատակին, ատոր պատասխանը կարելի է ստանալ 12 տարիներու հաւաքածոյին ուսումնասիրութենէն: Իսկ այդ օրերու մտատրականներու տպատրութիւնը այն է, թէ «Սիոն» եղած է իր ժամանակին փնտռուած ամսաթերթերէն մին, բան մը, որ աւելի ետք պիտի գար գրական և ստեղծագործական շարժում մը ստեղծելու թէ՛ Միաբանութեան մէջ և ինչու չէ նաեւ ժառանգատրաց վարժարանէն ներս:

Մօտ հինգ տարիներու, 2010-2014 և «երկրորդ» անարդարանալի ընդհատումէն ետք, ուրախութեամբ կու գանք «Սիոն»ը վերստին հրամցնել իր երբեմնի և ինչու չէ ՆՈՐ բաժանորդներուն և եկեղեցասէր ընթերցողներուն, այն քաջ համոզումով, որ պիտի կարենանք մասամբ գոհացում տալ տակաւին հոգեւոր սնունդի կարիքը զգացողներուն: Նաեւ ծրագրուած հայերէն յօդուածներն ու տեղեկութիւնները ըստ կարելւոյն, համառօտ և անզլերէն լեզուով ներկայացնել մեր ընթերցողներուն:

Այս օրերուն, երբ Հայոց լեզուն նահանջի մէջ է ամբողջ սփիւռքի տարածքին և ինչու չէ նաեւ Մայր Հայրենիքէն ներս, պաշտօնաթերթիս խմբագրութիւնը պիտի փորձէ իր կրօնական, գրական, բանասիրական և բարոյական նիւթերով ինքզինք մատչելի դարձնել մեր հանրութեան: Կը քաջալերենք մեր երբեմնի յօդուածագիրները բերելու իրենց անսակարկ ներդրումը, ոչ միայն ետ կեանքի կոչելու «Միոն»ը, այլ անկեղծ ու մեծ ճիգով մը զայն վերադարձնելու իր երբեմնի բարձունքին: Չենք հաւատար անկարելիին, այլ յոյսերնիս կը դնենք մեր հոգետր և աշխարհական բանասէրներու և ստատրականներու բարի կամեցողութեան և պատրաստակամութեան վրայ, «Միոն» պաշտօնաթերթին յատկացնելու իր երբեմնի պատուոյ տեղը, որ է ոգետրել և վերստին կեանքի կոչել Սրբոց Յակոբեանց Պատրիարքութեան ստատր կեանքի ծնունդը: Կ'անդրադառնանք թէ շատ ընելիք կայ, բայց կարենորը սկսիլն է:

Առայժմ մինչև իր ոյժերուն վերագտնելը

«Միոն» պիտի հրատարակուի իբր եռամսեայ հանդէս մը, 64 էջերով: Որոշ է թէ խմբագրական կազմը ինք է որ պիտի ընտրէ ու որոշէ տպագրութեան արժանի յօդուածներ: Անշուշտ նոր «Միոն» պիտի չունենայ նախկին թիւերու ճոխ պատկերազարդումը: Նաեւ ցանկացող բաժանորդներուն կարելիութիւն պիտի ընձեռուի մեր եռամսեան էջերորոնային կայքէջով ուղարկելու, խնայելու տպագրական և առաքման ծախքերը, միաժամանակ խնդրելով մեր բոլոր թանկագին բաժանորդներէն ըլլալու ճշդապահ՝ կատարելու իրենց տարեկան վճարումները ատենին, ի մտի ունենալով Պատրիարքութեանս և երկրին տնտեսական վերիվայրումները:

Ոյժ և կորով կը մաղթենք «Միոն»ի նոր աշխատակազմին, ի մասնատրի Ընդհանուր խմբագիր Դոկտ. Մինաս Գոճայեանին, որ ազնւաբար ընդունեց ստանձնել այս պատասխանատու և ծանր պաշտօնը:



ՄԱՅՐ ՏԱՃԱՐ Ս. ՅԱԿՈԲ



ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ԶԵՌԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Զախէն աջ նորընծայ Ս. Գէորգ Հայրապետեան, Սրբոյ Աթոռոյ Լուսարարապետ՝ Սեւան Արք. Ղարիպեան, Սրբոյ Աթոռոյ Պատրիարք Ս. Նուրիան Արք. Մանուկեան, նորընծայ՝ Ս. Ներսէս Արոյեան և նորընծայ՝ Ս. Աղան Գոգչեան

Խմբագրութեան կողմէ.- Կիրակի, Յուլիս 27-ին, Երուսաղէմի Ս. Աթոռէն ներս կուսակրօն քահանայութեան ձեռնադրութեան արժանացան Բրշ. Կարապետ, Լեւոն և Թաթուլ սարկաւազներ, Քրիստոսի Այլակերպութեան Տօնին՝ Սրբոյ Յակոբեանց Մայր Տաճարին մէջ՝ ձեռնաք Ամենապատիւ Պատրիարք Ս. Նուրիան Արք. Մանուկեանի: Կարապետ Սրկ. վերակոչուած է Ս. Գէորգ Արեղայ, Լեւոն Սրկ.՝ Ս. Ներսէս Արեղայ և Թաթուլ Սրկ.՝ Ս. Աղան Արեղայ: Այսու կը ներկայացնենք Պատրիարք Հօր հայրական պատգամը:

«ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԵՒ ԵՐԿՆԱՅԻՆ ՇՆՈՐՀ ԿՈՉԷ...» (Շարական)

Նուրիան Արք. Մանուկեան

Ճիշդ այս նոյն բառերով էր, որ քիչ առաջ մեր եկեղեցին կոչեց Ս. Գէորգ, Ս. Ներսէս և Ս. Աղան նորընծայ հայրերդ, դառնալու սպասարները Աստուծոյ խօսքին, Անոր եկեղեցիին ու դուք անսալով այսօր կու գար ձեր երիտասարդութիւնը

նուիրաբերելու քրիստոնէութեան հնագոյն եկեղեցոյ՝ Հայաստանեայց Առաքելական եկեղեցոյ, որ միայն փառք ու պատիւ կը բերէ ձեզի:

Այսօր, սիրելի նորընծայ միաբանակից եղբայրներ, Պայծառակերպութեան այս սուրբ տօնին, դուք եկաք ձեր կարգին այլակերպելով դառնալու Նոր Մարդեր: Պահը սուրբ է և դուք եւս հինա մաս կը կը կազմէք այդ սրբութեան: Ձեր կեանքերը, խորհուրդներն ու գործերը յետ այսու պիտի սրբուին և դուք պարտիք դառնալ մեկական տաճարներ Սուրբ Հոգոյն: Լաւ մտիկ ըրէք և պիտի լսէք բարախումը ձեր սրտերուն, որոնք ձեզի պիտի յիշեցնեն մոռցուած բաներ: Տակաւին մօտիկ անցեալին դուք այս սուրբ պահին մասին չէիք մտածեր և տակաւին աշխարհիին ու աշխարհիկին մաս կը կազմէիք: Օրերը ձեզ համար նոյնն էին, սակայն ձեր կեանքի ընթացքը կը փոխուի, որովհետեւ դուք յօժարեցաք դառնալ ընդունարանը աստուածային շնորհներուն, դուք որ կորսուած էիք աշխարհիկին, այս փոքրիկ երկրագունդին մէջ - որ իր կարգին կորսուած է մեր անձայրածիր տիեզերքին